ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կողմից 2023 թվականի հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է 6037 վարույթ, որոնցից 3177 պատիժ, 2183 վերահսկողություն, 323 այլընտրանքային խափանման միջոց և 354 կազմված դատապարտյալի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու զեկույց:

Հաշվետու ժամանակահատվածում միայն պատիժներով և վերահսկողություններով իրականացվել է 5360 վարույթ, իսկ 2022 թվականի 1-ին կիսամյակում իրականացվել է **4930** վարույթ: **2023 թվականի 1-ին կիսամյակում** իրականացված վարույթների թիվը **430 վարույթով /8.7%-ով/** ավելին է 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում տուգանք պատժատեսակով գանձվել է 230.353.717 ՀՀ դրամ:

2022 թվականի 1-ին կիսամյակում գանձվել է **168. 110. 976 ՀՀ դրամ: 2023 թվականի 1-ին կիսամյակում** գանձվել է **62.242.741 ՀՀ դրամով /37%-ով/** ավելի գումար՝ գանձված գումարի չափով, իսկ 2023 թվականի 1-ին կիսամյակում վարույթների աճի համեմատականով **/10%-ով/** ավելին է 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել են դատապարտյալի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ 354 զեկույց, որոնցից 52-ը դրական, 302-ը բացասական եզրակացությամբ:

Պատիժներ

Հաշվետու ժամանակահատվածում պատիժներով իրականացվել է 3177 վարույթ, իսկ 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել է **2987** վարույթ: 2023 թվականին իրականացված վարույթների թիվը 19**0** վարույթով **/6.3%-ով/** ավելին է 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Տուգանք. Հաշվետու ժամանակահատվածում տուգանք պատժատեսակով իրականացվել է 2491 վարույթ, իսկ 2022 թվականի 1-ին կիսամյակում իրականացվել է **2157** վարույթ: 2023 թվականին իրականացված վարույթների թիվը 334 վարույթով**/15%-ով/** ավելին է, 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում գանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 687.303.689 ՀՀ դրամ: **27.353.200** ՀՀ դրամի գանձման գործընթացը դադարեցվել է այլ հիմքերով, մասնավորապես՝ մահվան, տուգանքը փոխարինվել է հանրային աշխատանքներ պատժատեսակով և օրենքով սահմանված այլ հիմքերով, իսկ 429.**596.772** ՀՀ դրամի չափով գանձումը գտնվում է կատարման ընթացքում /տարաժամկետված, հետաձգված և այլն/:

Հանրային աշխատանքներ. Հաշվետու ժամանակահատվածում հանրային աշխատանքներ պատժատեսակով իրականացվել է 373 վարույթ, իսկ 2022 թվականի 1-ին կիսամյակում՝ 368 վարույթ: 2023 թվականի 1-ին կիսամյակում իրականացված վարույթների թիվը 5 վարույթով **/1.3%-ով/** ավելին է, 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ: Հաշվետու ժամանակահատվածում 120 վարույթի կատարումն ավարտվել է, իսկ 244 վարույթ կատարման ընթացքում է:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 312 վարույթ, իսկ 2022 թվականի 1-ին կիսամյակում՝ **462** վարույթ: 2023 թվականի 1-ին կիսամյակում իրականացված վարույթների թիվը 150 վարույթով **/32.4%-ով/պակաս** է 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում 104 վարույթի կատարումն ավարտվել է, իսկ 208 վարույթ կատարման ընթացքում է:

Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1 վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում 1 վարույթի կատարումն ավարտվել է:

Վերահսկողություններ.

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1902 վարույթ, իսկ 2022 թվականի 1-ին կիսամյակում՝ 1629 վարույթ: 2023 թվականի 1-ին կիսամյակում իրականացված վարույթների թիվը 273 վարույթով **/16.7%-ով/** ավելին է, 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում 330 վարույթ ավարտվել է, իսկ 1572 վարույթ կատարման ընթացքում է:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 274 վարույթ, իսկ 2022 թվականի 1-ին կիսամյակում՝ **309** վարույթ: 2023 թվականի 1-ին կիսամյակում իրականացված վարույթների թիվը 35 վարույթով **/11.3%-ով/պակաս** է 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում 64 վարույթ ավարտվել է, իսկ 210 վարույթ կատարման ընթացքում է:

Պատժի կրման հետաձգում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է մինչև վեց տարեկան երեխա ունեցող և ծանր հիվանդության հիմքով պատիժը հետաձգելու վերաբերյալ 3 վարույթ, 2022 թվականի 1-ին կիսամյակում 3 վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում 3 վարույթ ավարտվել է, իսկ 3 վարույթ կատարման ընթացքում է:

Անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով. Հաշվետու

ժամանակահատվածում իրականացվել է 1 վարույթ, իսկ 2022 թվականի 1-ին կիսամյակում իրականացվել է 2 վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում 1 վարույթ ավարտվել է, իսկ 1 վարույթ կատարման ընթացքում է:

Հաշվետու ժամանակահատվածում պրոբացիայի ծառայությունում պատիժներով և վերահսկողություններով հաշվառված 5360 անձանցից առակա է 38 անձանց նկատմամբ նոր հանցանք կատարելու վերաբերյալ կայացված օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր, որը կազմում է հաշվառված շահառուների մոտ 0.7 %-ը:

Այլընրանքային խափանման միջոցներով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 323 վարույթ այդ թվում՝

Տնային կալանք

. իրականացվել է 272 վարույթ, որից 80 վարույթ ավարտվել է, իսկ 192 վարույթ կատարման ընթացքում է:

Վարչական հսկողություն

. իրականացվել է 51 վարույթ, որից 2 վարույթ ավարտվել է, իսկ 49 վարույթ կատարման ընթացքում է:

Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման և հասարակություն վերաինտեգրման միջոցառումներ և ծրագրեր.

- **Կրթական միջոցառումներին ընդհանուրը մասնակցել է 28 շահառու: 28** շահառուներից (շահառուներից ոմանք մասնակցել են 2 և ավելի տարբեր դասընթացների):

  Մասնավորապես՝ **6-ը** մասնակցել են «Անգլերեն լեզու», **6-ը**՝ «Համակարգչային հմտություններ» դասընթացներին: Արարատում նորաբաց Մասնագիտական վերապատրաստման կենտրոնում 9 կին շահառու ուսուցանվում են «Կարի հիմունքներ» և «Կոսմետոլոգիական հմտություններ», «Վարսավիրական հմտություններ» իսկ **8** տղամարդ շահառու՝ «Կահույքաշինության հիմունքներ» մասնագիտական որակավորման դասընթացներին:

- **Մշակութային միջոցառումներին** մասնակցել է **44** շահառու: Պրոբացիայի շահառուները դիտել են զանազան ներկայացումներ, ինչպես նաև այցելել են տարբեր մշակութային կենտրոններ, պատկերասրահներ և թանգարաններ:
- **Կրոնական միջոցառումներին մասնակցել է 56** շահառու:
- **Իրավաբանական խորհրդատվություն** է տրամադրվել **1137** շահառուի, որից **71-ը** կանայք են և **10-ը** անչափահասներ:
- **Հոգեբանական աջակցություն ստանալու համար ուղղորդվել է 41** շահառու, ում նկատմամբ իրականացվել են անձնային աճի բարձրացման, հոգեկարգավորման, ագրեսիվության նվազեցման, կոնֆլիկտայնության նվազմանն ուղղված աշխատանքներ:
- **3** պրոբացիայի շահառու ուղղորդվել է այցելության բժշկական հաստատություններ և աջակցման կենտրոններ:
- **5** պրոբացիայի շահառու ընդունվել է աշխատանքի:

74 շահառու մասնակցել է վերասոցիալականացման այլ միջոցառումների. Շահառուները մասնակցել են իրավագիտակցության բարձրացման, կախվածությունների հաղթահարման թրեյնինգների, ճանաչողական այց են կատարել Կոկա-կոլայի գործարանին կից թանգարան: Վանաձորի համայնքապետարանի հետ համագործակցության արդյունքում՝ համայնքի ղեկավարի որոշմամբ շահառուին տրամադրվել է հանրակացարանում սենյակ և այլն:

<u>Համագործակցություն պետական և ոչ պետական կառույցների հետ</u>

1. ՀՀ արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայությունը համագործակցում է Եվրոպայի Խորհրդի գրասենյակի «Աջակցություն Հայաստանում Պրոբացիայի ծառայության հզորացմանը» ծրագրի շրջանակում: Ծրագիրը մեկնարկել է 2023 թվականի հունվարի 1-ից՝ 24 ամիս տևողությամբ:

2. ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության շրջանակում 2023

թվականի մարտի 7-ից ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում մեկնարկեց 2023 թվականի կրթական ծրագիրը: 2023 թվականի կրթական ծրագրում ներառված են «Կահույքաշինության հիմունքներ», «Կարի հիմունքներ», «Վարսավիրական հմտություններ», «Կոսմետոլոգիական հմտություններ», «Օտար լեզու/անգլերեն», «Համակարգչային հմտություններ» դասընթացները, որին ներգրավված են Պրոբացիայի ծառայությունում հաշվառված թվով 28 պրոբացիայի շահառու: